Գեղարդի վանքի տաճարն ու ժամատունը շինութեան ժամանակով իրարից հեռու չեն. 1215 թուին շինուած է տաճարը, իսկ ժամատան հիւսիս-արևելեան անկիւնի կրկնայարկ խորանները ՈՀԴ (= 1225) թուին Ճարի որդու (անունը տարաբաղդաբար եղծուած) արդիւնքով, «ի գեղջէն Երեւանոյ», տալով իւր այդին «որ յԵրեւան» և ստանալով 20 օր (Ցաւել. Ա. 105)։ Հօր անուան հետ ունինք մի եղբօր անունը, որ Մխիթարիչ է, մօր անունը եղծուած (Մանա . . ?)։ Այս թուականը չունին մեր նախորդները վանքի ուսումնասիրութեան մէջ, որ ունի շատ կարևոր նշանակութիւն չէնքերի ժամանակագրութիւնն ու մեկենասները որոշելու համար, թէև մեր լուսանկարն էլ շատ աղօտ և անպէտք ցուցադրելու։ Նման կրկնայարկ աւանդատներ կամ խորաններ կան և ձախ դասում. վերին աւանդատան դրան ճակատին, որ նուիրուած է Թադէոս առաքեալի անուան, Կիրակոսի արձանագրութիւնն է (Ցաւել. Ա. 106), նոյն ժամանակից, իսկ աւելի բարձր երեք արձանագրութիւններից միայն միջինն է կարդացուում, այն էլ նուիրատուի անունը եղծուած (Ցաւել. Ա. 107)։ Ժամատան շինութեան ժամանակից է Առփայեցի Լուլիկի արձանագրութիւնը, որ գտնուում է ձախ դասի որմայեցը և սիւնը կապող կամարի ներքևի մասում, արևմտեան կողմից, որով քառասուն դահեկան է նուիրում կաթուղիկէին (Ցաւել. Ա. 109). նոյն կիսասիւնից դէպի հարաւ՝ պատի վերայ Սիմէոնի և սրբա տակը Սարճուտի արձանագրութիւնն է. առաջինը յիսուն դահեկան է նուիրում և երեք ժամ ստանում, երկրորդը քսան և մի ժամ ստանում (Ցաւել. Ա. 110 և 111)։ Նոյն ժամանակից պիտի լինի և տաճարը սալող Ստեփանոսի արձանագրութիւնը ձախ դասի սեան վերայ, որ մենք կապեցինք տաճարի շինութեան մասնակից անձանց հետ (Ցաւել. Ա. 77)։

Աջ դասի սեան վերայ (աւելի բարձր միւս արձանագրութիւնը չի կարդացուում) ևս գտնուում է մի արձանագրութիւն, կարծում ենք ծագումով աւելի ուշ.



Պատկեր 147.

Կամաւն այ. ես Ցակ|ոբ Պապաքի որդի եւ ամ|ուսին իմ ՄեՆայ (փակագրով) խաթ|ուն միաբանեցաք սբ. Գեղարդանս եւ մեր հալալ ընչից տվ|աք ՃՀ: դՀ: եւ սպասաւորքս խոստացան :Դ: ժամ տարին :Ա: ինձ :Ա: | իմ հաւրն :Ա: Իմնայ խաթին. ժամ | սբ. Ցակոբի տաւնին ՀԴ թվ.։

Թուականի հարիւրաւորը պակասում է, որ ինչպէս տեսանք եզակի երևոյթ չէ մեր վիմական արձանագրութիւնների մէջ. եթէ ընդունենք «Ո», նշանակում է, գրուած է հէնց ժամատան շինութեան ժամանակ։ Բայց կասկածի հիմնաւոր պատճառներ կան աւելի ուշ ՉՀԴ կամ նոյն իսկ ՊՀԴ ընդունելու։ Առաջին՝ արձանագրութիւնը փորագրուած է ոչ վարժ ձեռքով, յետին ժամանակի տպաւորութիւն է անում, քանդակման եղանակով և գրերի ձևով տարբեր ժա-